ԱՐՏԱԿ ԴՈՒԼՅԱՆ

ԵՐԿԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՊԵՐՃ ՋԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Պերճ Զեյթունցյանի արձակին շատերն են անդրադարձել, այդ թվում այնպիսի ականավոր գրականագետներ, որպիսիք են Ա.Սարինյանը, Ս. Արզումանյանը, Ա.Եղիազարյանը, Ն.Ադալյանը, Զ.Ավետիսյանը, Կ.Աղաբեկյանը և շատ ուրիշներ: Սակայն գրեթե բոլորն էլ այն դիտել են գեղագիտական, գեղարվեստական, խոհափիլիսոփայական արժանիքների ու չափանիշների տեսանկյունից: Կարծես մի տեսակ աչքաթող է արվել կամ խորությամբ չի ուսումնասիրվել Զեյթունցյան-վիպասանի արվեստին հոգեհարազատ մի այնպիսի կարևոր յուրահատկություն, որն է հերոսի երկատումը, երկաշխարվածությունը, երկվորյակի ֆենոմենն ընդհանրապես:

Զեյթունցյանի արձակում անհատի երկատման առաջին փորձերն առկա են դեռևս «Կլող Ռոբերտ Իգերլի» վեպում: Հերոսը՝ Իգերլին երկատվում է, ինչը, ըստ հեղինակի, արդյունք է անհատ-հասարակություն, արդարություն-բռնություն հակադրությունների: Նա ապրում է երկու տարբեր աշխարհներում (Թյունիկ մոլորակ,Նապոլեոն Բոնապարտ, Ատոմային և Զրածնային ռումբերի հայրեր, ճառագայթված աղջիկներ, Թմբլիկ մարդ և ուրիշներ), ինչի շնորհիվ ավելի արտահայտիչ է դառնում հեղինակի խոսքը, ասելիքը: Հիշենք Իգերլիի հայտնի խոսքերը հասարակության դեմ մղած «Համառ պայքարում». «Ես կբաժանվեմ: Ես կդառնամ երկու հոգի: Մեկն իմ մեջ, մյուսն ինձանից դուրս: Համլետ և Դոն Կիխոտ»: Հերոսի երկատման հրաշալի օրինակ է նաև «Ամենատխուր մարդը» վեպը: Բոբ Ստրաուդը ստեղծագործության վերջում երկատվում է: Հատկանշական է, որ ծեր և երիտասարդ Ստրաուդները օտար են իրար ու Զեյթունցյանն էլ է, կարծես, այն կարծիքին, որ պատճառն այստեղ բոլորովին տարիքային տարբերությունը չէ: Եթե երիտասարդ Ստրաուդը իր մտապատկերներում ունի կյանքի բնական ընթացքը, ապա արդեն վաղուց բանտային կյանքին հարմարված ծեր Ստրաուդին ամենայնիվ հարիր չէ պարգևված ազատությունը: Զեյթունցյանը փորձում է նրանց երկխոսության միջոցով բացահայտել երկու Ստրաուդներից յուրաքանչյուրին սահմանված կյանքի

հաշվեկշիռը: Եվ, ինչպես սպասվում էր, բարոյական հաղթանակի իրավունքը իրեն է վերապահում ծեր Ստրաուդը.

«Դու հաղթել ես ինձ, Ստրաուդ,- եռանդով սկսեց ապացուցել պատանին: - Ես ընդունում եմ, որ հաղթել ես: Գիտե՞ս որն է մեր տարբերությունը: Ես ազատ էի: Իսկ դու նվաճել ես ազատությունը» (էջ 137):

Իսկ «Կատակերգություն առանց մասնակիցների» վիպակում երկատվում են կենդանիները: Արմենի հայտնագործած մեքենան հեղաշրջում է կատարում և հայտարարում, որ գազանների արքան ուղտն է և ոչ թե առյուծը, որ ամենախելացի գազանը արջն է, ամենախորամանկը՝ գետածին, իսկ ամենակեղծավորը առյուծն է ու ամենանենգը՝ կապիկը, և, որ քարայծը առյուծ է: Գազանները բոլորն էլ հրճվանքով են ընդունում մեքենայի հայտարարությունները:

Վիպակի, հատկապես այս մասի պայմանականությունը, իհարկե, տարբեր կարծիքների ու մեկնաբանությունների տեղիք է տվել: Հայտնվել է նաև այն միտքը, որ այստեղ պայմանականությունը հասցված է ծայրահեղության[1]: Իսկ մի այլ գրախոսականում նշվում է, որ վիպակը, հարցադրման հետաքրքրությամբ հանդերձ, գեղարվեստական արժեք չի դարձել հիմնականում պայմանական տարրերի ու պայմանական միջավայրի առավել վերացարկման պատճառով, որի հետևանքով խախտվել է ասելիքը, թեկուզև պայմանական, բայցևայնպես՝ իրական հիմքը[2]:

Մինչդեռ այդ ամենը, ըստ էության, ինքնանպատակ չէ. հեղաշրջումը կենդանիների մեջ միաժամանակ և հարցադրում է, և անհատի «ըմբոստացում»՝ իսկ ո՞վ ասաց, որ գազանների արքան առյուծն է և ոչ թե ուղտը, կամ ամենախելացին կապիկն է և ոչ արջը: Իսկ գուցե ընդհակառա՞կը: Հեղաշրջումը իբրև հարցադրում մատուցելով՝ հեղինակը արտացոլել է իր ժամանակակցի մտորումներն ու անհատական մեկնաբանությունները՝ արտահայտված գեղարվեստական հիանալի վարպետությամբ:

Ճիշտ է, Արմենը հրաժարվում է հեղաշրջումը հրապարակելուց, այնուամենայնիվ, կենդանիներն ի պատիվ մեքենայի կազմակերպում են հանդիսավոր շքերթ: Գետածին անցնում է աղվեսի գլխով: Ուղտը՝ առյուծի մորթով: Առյուծը՝ կոկորդիլոսի ոտքերով: Արջը՝ կապիկի պոչով: Կապիկը՝ ընձառյուծի ժանիքներով: Ընձառյուծը՝ ուղտի սապատով, գետածիու բերանով, արջի թաթերով: Այսպես՝ «իրենց մարմնի մասերն իրար խառնած ու շփոթած»:

---

[1] Սովետական գրականություն, 1975, N8

[2] «Հոդվածների ժողովածու», Երևան, 1981, էջ 80

Անհատի երկատման հիմնախնդրին Զեյթունցյանը բավական ծավալուն և յուրահատուկ միջոցներով անդրադառնում է «Արշակ Երկրորդ» պատմավեպում: Ճիշտ է, Արշակն այստեղ չունի իր բացահայտ նմանակը, և պայմանական տարրերն էլ բացակայում են, սակայն Արշակի յուրովի երկվորյակներին մենք հանդիպում ենք պատմավեպի բազմաթիվ հատվածներում:

Երկվորյակներից է ներքինի Դրաստամատը, պատմական հերոս, որը սակայն պատմավեպում Արշակին լրացնելու միտումով է ընտրված կարծես:

-...Այդ ինչպե՞ս է պատահում, Դրաստամատ, որ թշնամին տեսնում է վտանգը, իսկ յուրայինը օգուտը չի տեսնում,-հարցնում է Արշակը: -Ի՞նչ է, այս երկիրը միայն ի՞նձ է պատկանում:

-Որովհետև Արշակավանը դու կառուցում ես նախ և առաջ յուրայիններիդ դեմ,- պատասխանում է Դրաստամատը: Կամ՝ «Մոռանում ես, արքա: Այնպես չանես, որ դու մոռանաս, իսկ նրանք հիշեն: Ով առաջինը մոռացավ ատելությունը, նա էլ կպարտվի» (էջ 256):

Այնուամենայնիվ, Արշակի «հիմնական» երկվորյակը Գնելն է, առանց որի Արշակի կերպարը միանշանակ թերի կլիներ: Գնելի կերպարի կերտման զեյթունցյանական մանրակրկիտ աշխատանքը նկատելի է նույնիսկ անզեն աչքով, ինչը բնավ պատահական չէ: Այնպես, ինչպես պատահական չէ նրան «կենդանի պահելով» մատենագրությունից դիտավորյալ շեղումը: Թերևս, առաջին հերթին այս նկատի ուներ Ա. Մարտիրոսյանը, ըստ որի Պերճ Զեյթունցյանը չափազանց ազատ է վարվել պատմության հետ. «Իրադարձությունների ամբողջ ատաղձը սխալ է հանգուցված: Դա ինքնին քույլատրելի չէ: Բայց մեզ զարմացնում է նպատակը: Երբ որևէ հեղինակ փոխում է պատմության փաստը կամ իրողությունը, ապա միայն նրա համար, որ իր միտքն ավելի արտահայտիչ դարձնի: Այստեղ բոլորովին այլ է: Հանված կամ փոխված են հենց այն տեղիները, որոնք ավելի լայն հնարավորություն կտային հեղինակի նպատակը՝ պետականության և միասնության գաղափարը կամ կենտրոնախույս ուժերի և կուսակցությունների պայքարն արտահայտելու համար... Վեպի բոլոր հերոսները հակառակ են ավանդույթին և հանդես են գալիս իբրև իրենց նախատիպերի հակոտնյան (անտիպոդը)»[1]:

Գնելը, հիրավի, Արշակի երկրորդ Ես-ն է. նրանք միշտ պայքարի մեջ են միմյանց հետ, սակայն միաժամանակ չեն էլ կարող առանց մեկը մյուսի: «Եթե Գնելին սպաներ, Արշակավանն իրոք կտապալվեր...,- համոզված է Արշակը: - Սուտ են արքունի բոլոր որոշումներն ու հրամանները, մունետիկների կանչերը

[1] «Խորհրդային արվեստ», 1978, N 7, էջ 48

շեների և ավանների հրապարակներում, սայլերով ուղարկվող մթերքն ու շինանյութը, շինականին տրվող արտոնությունները, ամեն ինչ սուտ է, ճշմարիտը այն մարդու գոյությունն է, ով ընդունակ է իր ետևից տանելու ամբոխին, առաջնորդելու հովիվի կարոտ բազմությանը»: Կամ Փառանձեմ-Գնել երկխոսության հետևյալ հատվածը՝

- Հայրենիքի անունից ես խոսում: Ի՞նչ հայրենիք: Մանր-մունր իշխանները չե՞ն քո հայրենիքը: Թե՞ հայրս Սյունիքում թագավոր չի զգում իրեն:

- Ոչ, Փառանձեմ, Արշակը պիտի հաղթի բոլորիս,- մոլեռանդ հավատով պնդեց Գնելը: - Նրա ինչ լինելը պիտի մոռանան: Պիտի մնա միայն հեքիաթը: Երգեր պիտի հյուսեն նրա մասին: Հրաշքներ պիտի պատմեն: Դա ինձ է պետք: Իմ որդուն: Իմ թոռանը: Իմ ծոռին » (էջ 115):

Գնելի հայացքները գնալով վերածվում են մոլեռանդության. «Պիտի՞, պիտի՞ երկիր դառնա, թե ոչ: Պիտի՞ ի վերջո ամեն մարդ իր տեղն իմանա, գլուխը կախ իր գործն անի և քիչ իրեն տանջի այն մտքից, թե հարևանն գավառում ավելի լավ են ապրում, հարևանն երկրում էլ ավելի լավ, որքան հեռանաս էլ ավելի, իսկ հնդկաստանում՝ դրախտի պես: Պիտի գա՞ այն օրը, երբ ոչ ոք այլևս չի լքելու իր երկիրը և չի մեկնելու հեռավոր ափեր՝ բախտ որոնելու և հետո էլ չի մեռնելու... հայրենիքի կարոտից: Պիտի՞ այս երկիրը սովորի թագավոր ունենալ, թե ոչ: Թե՞ տանը տաքուկ-տաքուկ նստած, ամեն մեկը գլուխ է գովելու, որ հայկական գինու պես ընտիր գինի աշխարհում չկա, հայկական կերպասի պես կերպաս չկա, հայ զինվորի պես կռվող չկա... Թե՞ նրան պիտի թվա, որ այդ գերազանցությունից ինչ-որ բաժին էլ իրեն է հասնում, իր ընտանիքին, իր հինգ տարեկան թլիկ որդուն: Պիտի՞ այս երկիրը արժանի դառնա թագավոր ունենա, թե ոչ (էջ 111):

Եվ Արշակին էլ Գնելը բոլորովին կույր մոլեռանդությունից դրդված չի դրդում ինքնասպանության, այլ հանուն վաղվա, հանուն վաղը հյուսվող հեքիաթի, հանուն երգի, որ վաղն են երգելու. «Դու պիտի հերոսանաս... Պիտի նահատակ դառնաս... Քեզ սրբերի շարքը պիտի դասեն... Քո տարելիցը պիտի մեծ շուքով տոնեն միշտ... Քո մահվան առասպելից է հարություն առնելու այս երկիրը... Աղաչում եմ քեզ, մի խանգարիր այդ առասպելը ստեղծելու... Դա ավելի կարևոր է, քան քո անցողիկ հաղթանակները մարտի դաշտում... Անունովդ եմ երդվում, լսու՞մ ես, քո անունով, որից ավելի թանկ բան չկա այսօր ինձ համար, ես դռնեդուռ կընկնեմ և կպատմեմ բոլորին, որ դու քաջաբար կռվեցիր մինչև վերջին շունչդ, որ քո թրի հուժկու հարվածներից սարսափահար փախչում էր թշնամին»:

Ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Արամ Ալեքսանյանը. «Արքայի քաղաքական իդեալը և դրանից բխող հոգեբանությունը առկա է նաև Գնելի կերպարի մեջ: Նրա կերպարը կազմում է արքայի էության մի շերտը, նա Արշակավանի գաղափարի կրողն է արքայի մեջ, այդ իրողության և առասպելի անմնացորդ, մոլեռանդ զգացողությունը: Ժամանակի բարդ և բազմասեռ հոսքի ընթացքի հարաբերությամբ պատմական ինքնահաստատման այդ մոլեռանդությունը դատապարտված է կործանման»[1]:

Հայրենիքի հզորությունը Գնելը միանշանակ տեսնում է Արշակի ուժի մեջ, և յուրաքանչյուր հայի պարտականությունը պետք է լիճի հարգել ու սիրել Արշակին, իր արքային, անկախ նրանից արժանի է նա, թե անարժան, ստո՞ր, թե՞ առաքինի:

Երկատման մոտիվը Զեյթունցյանի ստեղծագործության մեջ իր ամբողջական արտացոլումը ստացավ «Ծրար հայելու մեջ» վիպակում: Այստեղ երկատման ֆենոմենը արտահայտված է հոգեբանական պլանում, երբ հեղինակը դիտարկում է մարդկային գիտակցությունը իբրև բարդ, բազմանշանակ փաստ: Իր ժամանակաշրջանի մարդու գիտակցությունը Զեյթունցյանը ներկայացնում է որպես հակասական, իրար հակադարձ տարբեր թշնամական թևերի երկատում: Մի խոսքով, Զեյթունցյանը նպատակ է հետապնդել ցույց տալ իր ժամանակակցի գիտակցության երկատումը, ներքին ամբողջականության կորուստը, որը հետևանք է տարբեր պատճառների՝ ծնված հասարակական անկայունությունից:

Այս ստեղծագործության մեջ Զեյթունցյանը երկատումը արտահայտում է երեք առարկաների միջոցով. հայելի, նկար, լուսանկար, որոնցից ամեն մեկը իր յուրովի դերն ու նշանակությունն ունի: Տեղին է նկատել, որ երկատված մարդու թեման սկիզբ առնելով դեռևս արևմտաեվրոպական ռոմանտիկների ստեղծագործություններից, ժամանակի ընթացքում բավական հարուստ «ավանդույթներ էր» ձեռք բերել երկվորյակի, նմանակի, գրականության այդ նոր հերոսի «ներկայացման» համար: Սակայն, ի տարբերություն արևմտաեվրոպականի (Հոֆման, Ֆաուլզ), այլև հետագայում ռուս գրականության մեջ լայն տարածում գտած երկվորյակի (Լերմոնտով, Գոգոլ, Դոստոեվսկի, Նաբոկով և ուրիշներ) զեյթունցյանական երկվորյակը ունի որոշակի առանձնահատկություններ: Նախ հերոսն ու իր նմանակը ապրում են առանձին-առանձին, մեկը իրական աշխարհում, մյուսը՝ հայելու մեջ, իսկ հերոսն էլ չի ձգտում սպանել նմանակին (ինչպես հիշված հեղինակներից շատերի մոտ): Երկրորդ,

---

[1] Գարուն, 1979, N 6

Զեյթունցյանի՝ մի քանի հոգու երկատված հերոսը բարեկամանում է նրանցից յուրաքանչյուրի հետ, դրանով, իհարկե, տեղի տալով իր անհատականության կորստին, կամ, ինչպես հեղինակն է ասում՝ դառնում է Խաչիկներից մեկը:

Ինչպես տեսնում ենք, երկատման մոտիվը Զեյթունցյանի արձակում բավական կայուն տեղ ունի և համոզված ենք, արժանի է գիտական լուրջ ուսումնասիրությունների:

Օգտագործված գրականություն

1.Беннет В.,Двойники и маски, Литературное обозрение 1993 №7-8
2.Գարուն, 1979, N 6
3.Гофман Э.,Новеллы.- М.: Московский рабочий, 1983
4.Долгополов Л.,О русской литературе конца XIX-начала XX века,М.,Совет.писатель,1985
5.Достоевский Ф., Двойник, М., Московский рабочий, 19836
6.Զեյթունցյան Պ., «Կլոդ Ոբերտ Իզերլի», «Հայաստան», 1968
7.Զեյթունցյան Պ.,«Կատակերգություն առանց մասնակիցների», «Հայաստան», 1975
8.Զեյթունցյան Պ., «Արշակ Երկրորդ», «Սովետ. գրող», 1977
9.«Հոդվածների ժողովածու», Երևան, 1981, էջ 80
10.Սովետական գրականություն, 1975, N8
11.«Խորհրդային արվեստ», 1978, N 7, էջ 48
12.Зарубежная литература XIX века: Романтизм, М.: Высшая школа, 1980,
13.Манн Ю.,Поэтика Гоголя.-М.: Художественная литература, 1988